

Գ. ԳԱՂԱԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Փառասոս Բիւզանդացի .

Պատմութիւն Հայոց , Յովհան կաթողիկոսի . — Թ դարու .

Թուղթ Ղազարայ փարպեցւոյ առ Վահան Մամիկոնեան . — Ե դարու .

Պատմութիւն Աղւանից , Մովսիս Կաղանկատուացւոյ . — Ժ դարու .

Ժամանակագրութիւն Մխիթարայ Այրիվանեցւոյ . — ԺԳ դարու .

Տիեզերական պատմութիւն Մեծին Վարդանայ . — ԺԲ դարու .

Պատմութիւն Սիւնեաց աշխարհին , Ստեփանոսի Սիւնեցւոյ . — ԺԳ դարու :

Բայց յայսցանէ ունի Պ. Էմինեան այլ և այլ միջոցաւ դրած պրակներ՝ մեծաւ մասամբ ի ռուս լեզու , զորս հոս մանր նշանակելը աւելորդ համարեցանք :

Հ. Գ. Վ. ՔՈՒՆԵՐԵԱՆ

ԿԱՌՈՒԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆՔ Ի Կ. ՊՈԼԻՍ .
— Գաղղիական Le Temps օրագրէն կը քաղենք հետեւեալ տողերը . — « Վերջին տեղեկագիրն՝ զոր Գերպ . Ազարեան կաթողիկոսն հաճեցաւ ուղարկել առ Բնկերոսքիւն Արևելեան Դպրոցաց՝ յԱրևմուտս , մեր առջև կը դնէ ներկայ դպրոցական վիճակն յարեւելս , և իւրաքանչիւր թեմի ունեցած կարօտութիւնները : Մենք զընթերցողն կ'առաքենք ուղղակի Նորին Սրբազնութեան տեղեկագրին վերժանման , գոհ լինելով միայն ծանուցանել աստ՝ որ հայկական պատրիարքութիւնն ունի ներկայապէս ինն դպրոց ի Կոստանդնուպօլիս և ի յրջակայս : Այս վարժարաններէն երկուքն՝ զիտնական աշխարհի մէջ քաջածանօթ՝ Վենետիկոյ Մխիթարեան Հայր վարդապետն ներքև են : Իրկու դպրոցք ալ՝ Եկանց՝ յանձնուած են Անարատ — Յղու թեան հայուհի Գերգ : — Ուսմանց հիմունքն կայացեալ են բնականաբար հայ լեզուին վրայ , բայց արտաքոյ չեն մնացեր նաև եւրոպական լեզուք , որք ամենակարևոր են արեւելեայց հոմար : Առաջին տեղին բռնած է գաղղիերէնն , ընդհակառակն անգղիերէնն՝ միայն եր

կու վարժարանաց մէջ կ'ուսուցանի : — Ամենայն կաթողիկ , ամէն ընտիր Գաղղիացի , Գերպ . Պատրիարքին ճիշդ ու դործունէութիւնը գոված ժամանակ՝ փափաք պէտք է զգայ մասնակցելու նաև իւր արդեանց բարեգործ ձեռնտուութեամբ , գիտելով մանաւանդ՝ որ այլուտս եղած օղնութիւնք՝ չեն բաւեր ամենակարևոր անգամ պիտոյից : — Վերջերս կիրիկիոյ Հաճին քաղաքին մէջ հրդեհ մը՝ բոցոյ ճարակ տուաւ միանգամայն մատուռ , դպրոց , Ժողովրդապետանոց . Արևելեան Դպրոցաց Բնկերոսքիւն չղանդաղեցաւ մէկէն օգնութիւն ուղարկելու՝ դպրոցը վերականգնելու համար . և առ մեզ սոյն նպատակաւ Կոստանդնուպոլիս յորդոր մ'ուղղեց՝ որ անտարակոյս պիտի արգիւնաւորի : Ուստի կը ծանուցանենք որ զրամական և կամ ոյլ ինչ տեսակ օգնութիւնք՝ հարկ է ուղղուին առ կեդրոնական պաշտօնարան վերոյիշեալ ընկերութեան . Ռէկլաք փողոց , թիւ 12 , ի Բարիզ . ուսկից փութով պիտի ուղարկուին առ Նորին Սրբազնութիւնն՝ կաթողիկոս կաթողիկ Հայոց » :